

եւ բանիրուն անձ մը որ բոլոր ազգին մէջ՝ բացի պէս պէս դիտութեանէն որ 12 տարուան ընթացքի մէջ Վիեննայու պէս քաղաք մը, իրեն մտայը պէս սուր խելքով մը կրնայ սորվիլ՝ սորված ըլլալէն ետքը, գաղիերէն, իտալերէն, լատիներէն, հայերէն, գերմաներէն, յունարէն եւ տաճկերէն ալ գիտէր, եւ որն որ երկու եւ կէս տարի ալ իրեն միաբանութեանէն Ձմիւռնի-այի Միխիթարեանց դպրոցին աշխարհազրութեան, թուարանութեան (գաղղիերէն լեզուաւ), Ածաշունչ եւ հայոց պատմութեան, վայելչազրութեան եւ ստուերազրութեան վարժապետ խրկուած ըլլալով դպրոց կառավարելու սորված էր, — այսպիսի անձ մը կորսընցները անգլիւս կորուստ համարելով կրկններէնք եր երեքնեցիներ աղաչանքնին՝ որ ազգին սիրոյն, քաղաքակիցներուն կամացը եւ Աստուծոյ սիրոյն համար յանձն առնու եւ զմեզ չթողու: Վերջապէս խորհելու ժամանակ խնդրելէն եւ երկայն ժամանակ մտածելէն, ազգին եւ ազգականաց սիրոյն հետ կուտելէն ետքը, ուրախութեամբ սրտի տեսանք որ ազգականներուն դուրսը, աղաչանքներուն հաճութիւնը, քաղաքացիներուն կամքը, հայրենեաց սէրը երկայն եւ սաստիկ կուտելէն ետքը յազ-թող գտնուեցան իրեն մտայը վրայ»:

Յետոյ կուգայ 15 յօդուածէ բաղկացեալ պայմանադրութիւն մը Աստուածատուր Ջունգի եւ Սուչովայի հայ երեւելիներուն միջեւ երկուքուկէս տարուան ուժով: Ջունգ անմիջապէս կը սկսի աշխատանքի, ջանալով հիմն ի վեր բարեկարգել հայ դպրոցը՝ կրթական նոր ձեւերու համաձայն:

«Կարգավար» Աստուածատուր Ջունգէ 1850-ին խմբագրուած «Կամոնի Սուչուայի խոյն վարժարանի» կը պարունակէ 71 կանոններ, — թէ «տղան ինքն իրեն վարուելու ատեն ի՞նչ կանոններու պէտք է միտ դնել», «տղան իրեն հաւասարներուն, իրեն ընկերներուն հետ ի՞նչպէս պիտի վարուի», «տղան վարժապետներուն հետ ի՞նչպէս պէտք է վարուի»:

Կարժէ հոս արտադրել այդ կանոններէն քանի մը հատը, գաղափար մը տալու համար այդ օրերու մանկավարժութեան վրայ:

«Վարժապետներուն յարարելութեամբ տղոցմէ պահանջուած բանը հնազանդութիւնն

է, չէ թէ ծառայական այլ որդիական. այսինքն չէ թէ ահի եւ գաւազանի համար այլ որդիական սիրով եւս:

«Տըղա՛ք դիտնաք որ ծանր բան է հրամայելը պատուիրելը, անոր համար մի՛ սպասէք որ ամէն անգամ ձեզի հրամայուի կամ սպառնացուի, այլ վարժապետներուգ ակնարկութիւնն ալ բաւական ըլլայ ձեզի իր կամքը կատարելու. որպէսզի չի ստիպուի վարժապետը ամէն անգամ հրամայել. եւ աս ծանրութիւնը ինչչափ կրնաք նէ վրայէն վերցուցէք:

«Վարժարանը ինքն իրմէ ազատ կացութիւն մի է. ամէն ձեռք ամէն ոտք չի կրնար մէջը մտնել որ Բարելոնի խառնակութիւն չըլլայ:

«Վարժարանի կարգաւորութիւնը, վարժապետաց դիւրութեան եւ տղոց յառաջդիմութեանը համար վարժարանը տղոց տարին մէկ ատեն մը միայն կ'առնուի, Սեպտեմբերի տարեկան քննութեանէն ետքը»:

Կարձ տեւած է այս խանդավառ շրջանը:

Սուչովայիք չեն կրցած մարսել Աստուածատուր Ջունգը: Չափազանց արմատական գտած են զայն: Ան ստիպուած է Սուչովան թողուլ, եւ ուրիշ ասպարէզներու նուիրել զինքը: Տիրանալ զիրքի, տիտղոսի ու հարստութեան: Այս ան ասպետ Ջունգն է որուն կտակով հայ ուսանողներ կը կրթուէին Եւրոպայի հայ համալսարաններուն մէջ:

Ջունգէն յետոյ նորէն անկու՛մ:

Արշակ Ալթունեան որ 1876-ին այցելած է Սուչովա՛ սապէս կը պատմէ իր տպաւորութիւնները (Տեղեկագրութիւն Հայոց Գաղթականութեան, էջ 116). «Դպրոցնին շատ խեղճ բան է, ուր ուսումը հասարակ ընթերցմունքէն անդին չանցնիր. վարժապետնին է Աստուածատուր Բամաշկան անուն ծերունի մը որ 500 Ֆիօրին թոշակ կը ստանայ, բայց ինքը հայերէն պարզ ընթերցմունքէ մը անդին չի կրնար անցնել, նմանապէս գրած դիրքերնին ալ Ազամէն մնացած է: Այս դպրոցը յաճախողներն խեղճ աղքատաց զաւակներն են, որոնց ամենէն աւելի պէտք է ուսումը, բայց հարուստք իրենց զաւակներն քաղաքային մեծ վարժարանը կը զրկեն տարին 100 Ֆիօրին թոշակով: ... Աղջկանց դպրոց չկայ, այլ գերմանուհի մը եւ